Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Штер Черниковский К.
Штрейн Т.

Ітп
2035

1999

ՆԵՐՍԷՍ Ե

ՎԵՀԱՓԱՌ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1843—1857

Գրեց Յովհաննես Տէր Էփրահամեան.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

ՌՈՍՏՈՎ (Դոնի վերայ)
ՏՊԱՐԱՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
1881.

ԼԵՌ
2035

ՆԵՐՍԷՍ Ե,

Հայրապետ տիեզերական եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց.

1843–1857.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՐԱՆ

ՆԵՐՍԷՍ Ե

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

1843–1857

ՆԵՐՍԷՍ Ե, իբրև կաթողիկոս, այն հնաշխարհիկ հայրապետներէն մէկն էր, որ իւրեանց եռանդուն ազգասիրութեամբը, նախանձելի սրբակեցութեամբը, խոհական կառավարութեամբն ու նշանաւոր գործունէութեամբը անմահացուցած են իւրեանց անունները. իբրև երեւելի անձն ներկայ ինն եւ տասներորդ դարուս, այն մարդիկներէն մէկն էր, որ իւրեանց բարակ քաղաքականութեամբը, անձնանուէր հայրենասիրութեամբը, արթուն բնաւորութեամբն ու նուրբ հեռատեսու-

42035-60
38 2039

թեամբը յաւերժական յիշատակներով փառաւորուած են. և իբրև Հայ, այն դիւցազանց մէկն էր, որ պատերազմի ժամանակ ախոյեան հանդիսացան հայրենեաց աշխարհին մէջ. և նորա բարբարութեանն ու ազատութեանը մինչև ի մահ պաշտպան կեցան, և խաղաղութեան ժամանակ՝ իւրեանց անխոնջ աշխատութեամբը ազգիս բարոյական յառաջադիմութեան հիմունքը ձգելով՝ նորա ուսումնական դաստիարակութեան վերայ փոյթ ու խնամք ունեցան:

Այս մեծահռչակ կաթողիկոսը ծնած է 1771 թուականի օգոստոսի 13-ին Աշտարակ գիւղին մէջ, որ ժամանակով Հայաստանի Արարատեան նահանգի՝ Բագրևանդ գաւառի նշանաւոր տեղերէն մէկն էր, և 20 վերստ հեռաւորութիւն ունի Ս. Էջմիածնի մայր եկեղեցիէն: Իւր ծագումը Կամսարական — Շահազիզեանց ազնուական հին տոհմէն էր, որ մինչև ցայժմ Հայաստանի և Պարսկաստանի մէջ մեծանուն ցեղերէն մէկն է. և նորա կենաց առաջին տարիներէն այսքանս գիտեմք, որ մինչև հրնա-

գետասանամեայ հասակը իւր բարեպաշտ ծնողաց տունը կենալով՝ Աշտարակայ քահանայէն հայերէն գրավարժութիւն կսովորէր. յետոյ իւր ամենապատիւ կնքահայր, Գալուստ արքեպիսկոպոսի հոգաբարձութեամբը Ս. Էջմիածին գնաց, ուր քիչ ժամանակի մէջ իւր կարգէ դուրս ընդունակութիւնը, ուսումնասիրութիւնն ու հաստատուն բնաւորութիւնը ցուցընելով՝ Գալուստ սրբազանը մասնաւոր խնդիրք արաւ Կոստանդնուպոլսոյ Գրիգոր արքեպիսկոպոսին, որ այն ժամանակը մեծ համբաւ ունէր գիտութեան և առաքինութեան կողմանէ, որպէս զի իւր քովն առնու զՆերսէս պատանին, և ըստ ներելոյ ժամանակին՝ ուսումնական գիտութեանց մէջ կրթէ: Գրիգոր սրբազանին յօժարակամ սիրով յանձնառութիւնն իմանալէն վերջը՝ Ներսէսը Կոստանդնուպոլիս յուղարկուեցաւ, ուր քանի մի տարուան մէջ աստուածաբանական գիտութեանց հմտանալէն յետոյ Զմիւռնիա գնաց և իւր 23 տարեկան հասակին, այսինքն 1794-ին

սեպտեմբերի 24-ին վարդապետ ձեռնադրուեցաւ և Էջմիածին վերադարձաւ:

Ներսէս՝ տեղ հասնելուն պէս թէև շատ տխրեցաւ Գալուստ արքեպիսկոպոսի մահուան վերայ, որուն երէցագոյն հայր կանուանէր ինքը, բայց Ղուկաս կաթողիկոսը նորա բնական հանճարն ու ստացական ձիրքը տեսնելով՝ մասնաւոր խնամք ունեցաւ վերան և Ներսէս վարդապետին իւր գրագրութեանցը աշխատեցուց:

Նոյն միջոցները Թէքիրդաղցի Սարգիս վարդապետը (որ Բասենցի Յարութիւն արքեպիսկոպոսի ժամանակէն աշակերտակից էր Ղուկասու) Էջմիածին գնալով՝ մէկ համբաւ տարածուեցաւ մեր համազգեաց մէջ, որ իբր թէ Հայոց ազգը Հռովմայ եկեղեցւոյն հետ կուզեն միացընել [1], եւ այնքան երկար տեւեց այս լուրը, որ վերջապէս Տաճկաստանի Հայերէն ոմանք մասնաւոր նամակաւ հարցուցին Էջմիածնի միաբաններէն համբաւին ստուգութիւնը: Կաթողիկոսը լսելուն պէս՝ Ներսէս վարդապետը Տաճկաստան՝ այսինքն Օսմանեան եւ Կոստանդնուպոլիս յուղարկեց իրեն կողմանէ, ուր ազգայնոց մէջ յարուցած վրդովմունքը իւր ճարտար խօսքերովը խաղաղութեան հրեշտակի պէս հանդարտեցընելէն յետոյ՝ Էջմիածին վերադարձաւ:

Ղուկաս և Յովսէփ կաթողիկոսներէն վերջը՝ երբ 1802 թուականին Դանիէլը կաթողիկոս նստաւ, Ներսէս վարդապետի եղական յատկութիւնները տեսնելով՝ ծայրագոյն վարդապետութեան գաւազանը տուաւ նորա և քիչ ժամանակէն յետոյ եպիսկոպոս ձեռնադրեց ու Վրաստան (Թիֆլիզ) յուղարկեց, ուր Պարսից և Ռուսաց մէջ բորբոքած պատերազմի բոլոր ժամանակը աւոյեան հանդիսանալով՝ իւր ազգի բարօրութեանը աշխատեցաւ:

Պատերազմէն յետոյ կաթողիկոսի հրաւիրանօքը՝ Ներսէս եպիսկոպոսն Էջմիածին վերադարձաւ և Ս. Աթոռոյն գործերն յառաջ տանելու կողմանէ ե-

[1] Այս համբաւոյն վերայ Հայերը Թէքիրդաղցի Սարգիս վարդապետին հետ այնքան թշնամացան, որ վերջինս Վրացւոց Հերակլ Թագաւորին ձեռնտուութեամբը հազիւ կարողացաւ Թիֆլիզ և այն տեղէն ևս Եւրոպա փախչիլ:

ռանդուն գործակից եղաւ իրեն: Կաթողիկոսը նորա առ ինքն ունեցած հաւատարմութիւնն ու առ ազգն ունեցած անկեղծ սէրը տեսնելով՝ արքեպիսկոպոսական բարձր աստիճանը տուաւ նմա, և քիչ ժամանակէն յանձնարարական թղթերով Տաճկաստանի այլևայլ քաղաքներն յուղարկեց առաքելական պաշտօնիւ, որ հետզհետէ յառաջ երթալով՝ Կոստանդնուպոլիս գնաց, Տաճկաց վէզիրներուն ու սուլթանին հետ տեսնուեցաւ, և ամենայն յաջողութեամբ Էջմիածին վերադարձաւ, սուլթանի կողմանէ փառաւոր հրովարտակ (ֆերման) տանելով կաթողիկոսին: Նոյն միջոցները, այսինքն 1809 թուականին Ռուսաց և Տաճկաց մէջ պատերազմ բացուելով՝ Դանիէլ կաթողիկոսն իւր բացակայութեան պատճառաւ Էջմիածնի Ս. Աթոռոյն կառավարութիւնը Ներսիսին յանձնեց, որով ընդարձակ ասպարէզ բացուեցաւ իւր ազգասէր գործունէութեան առջև:

Դանիէլէն յետոյ երբ 1810-ին կաթողիկոս նստաւ Եփրեմը, Ներսէս ամենայն հաւատարմութեամբ գործակից եղաւ նաեւ նորա բարի բարի ձեռնարկութիւններին, որով այս նոր կաթողիկոսին սէրը եւս արժանապէս վայելելով՝ 1811-ին Վրաստանի առաջնորդ նշանակուեցաւ, եւ յաջորդ տարին, այսինքն 1812-ին յունուարի 9-ին, իբրև արժանընտիր հովուապետ, Ռուսաց կայսեր բարձրագոյն հրովարտակին հետ մէկտեղ վեղարին ճակատը կրելու մետրապոլտական ադամանդեայ խաչն ընդունեցաւ:

Այնուհետև Ներսէս Թիֆլիզի մէջ բնակելով՝ և Եզգիս այժմու պիտոյքն ու եւրոպական լուսաւորութեան օգուտները պէտք եղածին չափ հասկընալով՝ բոլոր ուժովն ու ջանքովը աշխատեցաւ ոչ միայն իրեն յանձնուած հօտին հոգևորական կրթութեանը, այլ և ընդհանուր ազգին ապագայ բարօրութեանը. ուստի և 1819-ին ազգասէր Հայկազանց ձեռնտուութեամբն սկսաւ այժմու ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴՊՐՈՑի ընդարձակ ուսումնարանին հիմնարկութիւնը՝ Թիֆլիզու մայր եկեղեցւոյ հողին վերայ:

Ուսումնարանի շինութեան համար թէև ի սկզբան ժողովուած փողը բաւական համարուած էր, բայց յետոյ շինութիւնը մեծցընելուն, ինչպէս նաև մասնաւոր բնակարաններ աւելցուելուն պատճառաւ՝ քիչ եկաւ. ուստի և Ներսէս իւր բոլոր ոյժն ու նիւթական օգնութիւնը չխնայելով՝ գրեթէ ինչ որ դրամական կարողութիւն ունէր, բոլորն ևս այն ազգալոյս շինութեանը նուիրեց: — Այս միջոցները կրկին անգամ ձեռնտու եղան Ներսիսի, նախ՝ Լազարեան իշխանները և ապա Վանեցի մահտեսի Գասպարը, որ իւր կըտակին մէջ Ներսէս արքեպիսկոպոսին գլխաւոր կտակակատար կարգելով՝ նորա հիմնած ուսումնարանին ըստ հապար վեց հարիւր ոչ-էլ խոստացաւ, այսպիսի պայմանաւ. „Նորակառոյց վարժարանի Հայոց աստ ի Թիֆլիզ քաղաքի՝ յատկացուսցեն չորս հազար վեց հարիւր արծաթ մանէթ, և սովին գումարաւ գնեալ զանշարժ կայս, զեկամուտ նորին ամի ամի պիտոյացուսցեն յաղագս վարժարանին յաւիտեանս ժամանակաց“:

1823-ին շինութիւնը բոլորովին վերջանալէն յետոյ՝ Ներսէս արքեպիսկոպոսը մեծ ծախքով զանազան տեղերէ վարժապետներ հրաւիրեց, որոց մէջ աւելի նշանաւորներն էին, առաջինը՝ Փարիզու Արևելեան Լեզուաց վարժարանի հայկաբանութեան ուսուցիչ Յակոբ Լարժապետ Շահան-Զրպետեանը[1], և երկրորդը՝ Մոսկուայի Լազարեան Դեմարանի մէջ դասատու բազմարգուն Յարութիւն Լարդապետ Ալամդարեանը[2]:

Այս միջոցներն էր ահա Ներսիսի կենաց ամենագործուար տարիները. վան

---

[1] Շահան-Զրպետեան Յակոբ վարժապետը ծնած է 1772-ին դեկտեմբերի 19-ին Եդեսիոյ մէջ, և [illegible] եղած է մեր Ներսիսի Շնորհալեաց Շահան եղբօր շառաւիղն: Իւր սկզբնական ուսումը Եդեսիա քաղաքին մէջ Բաղիշեցի Ադալեան Գրիգոս վարդապետէն առած է. յետոյ Ասիայի ու Եւրոպայի այլեւայլ քաղաքները կրթուելով՝ Փարիզու Արևելեան վարժարանին մէջ հայկաբանութեան ուսուցիչ եղած է մինչև 1825, ուսկից Թիֆլիզ գնալով մինչև 1838-ը ապրեցաւ է 66 տարեկան հասակին մեռաւ:

[2] Ալամդարեան Յարութիւն վարդապետը որ իւր կենաց վերջին տարիները Նոր-Նախիջևանի Ս. Խաչ վանքին վանահայր էր, աւագակաց վերաւորելովը 1834 թուականին մայիսի 25-ին վախճանեցաւ: Թէ՛ սորա և թէ Շահան-Զրպետեան Յակոբ վարժապետի ընդարձակ կենսագրութիւնը պատրաստած եմք ուրիշ նշանաւոր շատ հայկազանց կենսագրութեանց հետ մէկտեղ՝ մեր երկհատոր ՀԱՆՐԱԳԻՏԱԿ ԲԱՌԱՐԱՆ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ վերնագրով աշխատութեան համար, որ եթէ (ինչպէս հրատարակած եմք) դրամական ձեռնտուութիւն գտնեմք մեր ազգայնոց կողմանէ, պիտի տպագրեմք:

զի մէկ կողմէն Պարսից և Ռուսաց մէջ սկսուելու նոր պատերազմին պատճառաւը Ռուսաց Ցէրութենէն ընդունած առաջարկութիւններն ու հրամանները կկատարէր, եւ միւս կողմէն Նփրեմ կաթողիկոսի հայրապետական գործառնութեանցը օգնութեան կհանէր, Ներսիսեան նորահաստատ դպրոցին բարեկարգութեանը մեծապէս հոգ կտանէր, նորահրաւէր վարժապետաց դասախօսութեանը շատ անգամ անձամբ ներկայ գտնուելով՝ պէտք եղած տնօրէնութիւնները կանէր, Թիֆլիզու Կոնսիստորիայի եկեղեցական և երբեմն նաև աշխարհական դատերն ու դատաստանները կը վճռէր, մէկ խօսքով (1819—24) այն աստիճանի ինքզինքը ազգային գործոց կամաւոր զոհ ըրած էր, որ երբ 1824-ին գաղղիացի ճանապարհորդ Գամբա ասպետը դեսպանական պաշտօնիւ Պարսկաստան երթալու ժամանակ Թիֆլիզ գնաց և բարեկամացաւ Ներսէս արքեպիսկոպոսին հետ, զարմացաւ նորա անտանելի աշխատանացն ու մեծամեծ դիտաւորութիւններուն վերայ,

յորս ակնյայտնի կերևէր պայծառ արշալոյս մի բոլոր Կովկասաբնակ և հետևապէս ամենայն Հայոց փայլուն ապագային համար, ուստի և իրաւամբ գրեց իւր ճանապարհորդութեան մէջ և անաչառապէս հրատարակեց՝ թէ „Parmi les fondateurs des grands travaux, il n'en est pas de plus recommandable que Nersès, archevêque Arménien, à Tiflis. — այսինքն, Մեծագործութեանց ձեռք զարնող երևելի անձանց մէջ՝ Հայոց Ներսէս արքեպիսկոպոսէն նշանաւորը չկայ Թիֆլիզու մէջ [1]“:

Ռուսահարանի դասախօսութեան առարկաներն էին ի սկզբան Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, քերականութիւն և քրիստոնէական վարդապետութիւն. այլև ռուսերէն լեզու, ընդհանուր աշխարհագրութիւն, թուաբանութիւն և վայելչագրութիւն. բայց Շահան-Ջրպետեանի Թիֆլիզ հասնելէն յետոյ (1826) յաւելցաւ նաև եկեղեցական պատմութիւն և աստուածաբանութիւն: Ասկէց քիչ մի յառաջ

[1] Voyage dans la Russie méridionale, par le Chevalier Gamba. Paris, 1826, t. II, p. 157.

(1825) բացուեցաւ նաեւ Ներսիսեան ուսումնարանի տպարանը, որ ամենայն պարագայիւք ընծայեց ազնուական Աղա Գէորգ Արծրունին: Աշակերտաց թիւը հետզհետէ յաւելնալով՝ 400-ի հասաւ, բայց ուսումնարանի ընդարձակութեանը նայելով՝ նորա սրբազան հիմնադրին միտքն այն էր, որ մինչեւ 800-ի հասնի:

Ներսիսեան դպրոցը մինչդեռ այսպիսի զեղեցիկ սկզբնաւորութեամբ եւ մեծ յառաջադիմութեամբ ցանկալի պտուղներ կխոստանար Հայաստանի նոր մարդկութեան, եւ ահա 1827 թ. Ռուսաց եւ Պարսից պատերազմը բացուեցաւ, որով Ներսէս Տէրութեան կողմանէ Ռուսաց բանակին գործակցութեանը հրաւիրուեցաւ եւ զօրաց հետ մէկտեղ Երեւան գնաց:

Պարսից հպատակ՝ Երեւանի ու Հինգախիջեւանի Հայերը՝ որ պատերազմի լուրն առնելով՝ սիրտերը կոտրած՝ յոյսերն Աստուծոյ եւ Ռուսաց պաշտպանութեանը վերայ դրած էին, երբ լսեցին որ Պասկեւիչ սպարապետին հետ մէկտեղ պատերազմականաց մէջ Պարսից բանակին վերայ կերթայ նաեւ Ներսէս, իսկոյն սիրտ առին, ուրախացան եւ արիացան, մանաւանդ այն միջոցին՝ երբ Պասկեւիչի ու Ներսիսի առջեւ, ինչպէս Յեսուայ եւ Տապանակի առջեւ՝ զօրաց պատերազմական փողերը հնչեցընելու ժամանակ՝ Սարդարապատի բարձրաբերձ պատերը Երիքովի հոյակապ պարիսպներուն պէս կայծականհար եղածի նման փլան՝ կործանեցան: Այնուհետեւ Ներսէս Հայոց հետ իբրեւ Հայր ընդ որդւոց գերկախառն սիրով միանալով՝ իւր կենդանի օրինակովն ու քաջալերական խօսքերովը Հայկազանց սրտին մէջ ի վաղուց հետէ մեռցուած պատերազմական քաջութիւնն արթնցուց, որք Ռուս զօրացք հետ միանալով այնպիսի անձնանուիրութեանբ պատերազմեցան, որ քիչ ժամանակէն բոլոր Պարսից Հայաստանը Ռուսաց ձեռքն անցաւ, ուսկից 8000 տուն կամ 40 հազար հոգի Պարսից լուծը թօթափելով՝ Ռուսաց քրիստոսազօր Տէրութեան պաշտպանութեանը հպատակեցան, եւ այն օրէն

ազատեցաւ անօրինաց բռնութիւններէն Էջմիածինը, — Ս. Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի երկնահաստատ՝ նուիրական Աթոռը:

Ներսիսի այն սիրագործութեանց համար Ռուսաց Տէրութիւնը դեռ պատերազմը չվերջացած նախ՝ 1827-ին յունիսի 17-ին Բարձրագոյն հրամանաւ Ռուսաստանի մէջ եղած բոլոր Հայոց եկեղեցականներն ու նոցա կալուածները քաղաքական հարկատուութենէ եւ զինուորաց բնակութիւն տալու պարտքէն յաւիտեանս ժամանակաց ազատ արաւ. եւ երկրորդ՝ պատերազմին վերջանալէն քիչ մի յառաջ, իբրեւ առանձին պարգեւ (25 յունուարի 1828) Ներսէս արքեպիսկոպոսին Աղեքսանդրի նեւացոյց առպետական շքանշանը յուղարկել բարեհաճեցաւ, հետագայ կայսերական հրովարտակաւս.

„Սրբազան Ներսէս, Արքեպիսկոպոս Հայոց,

„Վաղ ժամանակէ հետէ և շատ դիպուածներու մէջ ցուցանելով Ռուսաց

„Տէրութեանս ձեր գովելի մտերմութիւնը, մանաւանդ Պարսից այժմեան „պատերազմին մէջ, — որ, ինչպէս կը„յուսամ շուտով բարեյաջող վերջ կու„նենայ, — դուք Մեր զօրաց հետ մին„չև այն աստիճան թշնամեաց դէմ „դրած էք, որ ձեր կեանքը վտանգի „մէջ եղած է: Կովկասեան զօրաց ա„ռանձին հրամանատար գեներալ — ա„դիւտանտ Պասկեւիչը, շատ անգամ „իմացընելով Մեզ ձեր գովանի գոր„ծերը, յայտնած է որ պատերազմին „բոլոր ժամանակը Ռուսաց օգտին նա„խանձաւոր հանդիսացած էք անձամբ „անձին, հաստատուն պահելով Հայ „ժողովրդեան մէջ առ Մեզ ունեցած „հարազատութիւնը, ոչ միայն ձեր բարի „խորհուրդներովն ու յորդորանօքը, այլ „և ձեր բուն անձին օրինակովը:

„Ձեր այսչափ օգտակար աշխատութեանց փոխարէն և Հայազգի ժողովրդեան Իմ առանձին շնորհակալութեանս նշան՝ արժան դատեցի վարձատրել ձեզ սրբոյն Աղեքսանդրի նեւացոյց առպետական կարգովը, որոյ

„Նշանները թղթոյս հետ յուղարկելով, „կը մնամ ձեր լաւութեանը ցանկացող.“

(Բնագրին մէջ ստորագրած է) ՆԻԿՈԼԱՅ.

Պարսից պատերազմէն վերջն սկսաւ Ցաճկաց պատերազմը, որով աստուածային նախատեսմանութիւնը նոր ճանապարհ բանալով Ներսէս արքեպիսկոպոսի համար, Տէրութեան կողմանէ 1828-ին մայիսի 17-էն և 21-էն Բեսարաբիա հրաւիրուեցաւ, ուր բոլոր պատերազմին ժամանակը ճշմարտապէս դիւցազնական քաջութեամբ և եկեղեցական փառօք պաշտպան կացաւ այն տեղի ազգայնոց, միանգամայն և Տէրութեան առ ինքն ունեցած հաւատարմութիւնը աւելցուց:

Պատերազմէն վերջը՝ Նփրեմ կաթողիկոսն իւր ծերութեան պատճառաւ Էթոռը կառավարել չկարողանալով՝ շատ կուզէր Ներսէս արքեպիսկոպոսին Էջմիածին վերադառնալը. ուստի և 1828 թ. հոկտեմբերի 20-էն այս կոնդակը գրեց նորան.

„Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Նփրեմ կաթողիկոս ամենայն Հայոց, և ծայրագոյն պատրիարք առաքելական եկեղեցւոյ Քրիստոսի, և Աթոռոյս մեծի՝ որոյ կաթողիկէ Էջմիածնի: Ողջոյն եռանդեան սիրով մա-

տուցանեմք՝ երբեմն որդի, և այժմ զուգապատիւ եղբայր՝ Բարձր Սրբազան Ներսէս Արքեպիսկոպոսի, և Ասպետի, հռչակաւոր բազմարդիւն Հովուի եկեղեցւոյ Քրիստոսի: Այլ և զաղօթս արտասուախառն ջերմագին պաղատանաց վերառաքեմք առ Ամենաբարձրեալն Աստուած, զի անդառնալի աղօթիւք հայցուածոց սրբոյն Գրիգորի բազմաչարչար խոստովանող վկային իւրոյ, և Լուսաւորչի տանս Թորգոմեան, և շնորհիւ Քրիստոսաէջ Տեղւոյս սրբութեան՝ հաճեսցի պահպանել ընդ հովանեաւ հզօր թևոց իւրոյ յամայր ամանակօք անսասան միշտ և անդրդուելի՝ զմիակ յոյսդ և զգամանդեայ սիւնդ հաստատութեան փտեալ ծերունւոյս, և Աթոռոյս, և համօրէն Միայանութեան սորա. որոց ամենեցուն աչք առ քեզ հային, ի քեզ յուսան, և քև միայն ակն ունին յայսմիկ երկնախնամ բարեդէպ ժամանակիս տեսանել զՀաստատիմն բարեզարդութիւն Քրիստոսեան Ցաճարիս:

„Գրեմ արդ առ անձկալիդ իմ զբացայայան. քանզի ամք կենաց իմոց հոլովեալ ցութաներորդ թիւ, ընդ նմին զայրացեալ գտան յանձին իմում տկարութիւնք մարմնոյ և հոգւոյ մինչև իսպառ՝. տեսութիւնն աչացս կարի իսն նուազեալ, ականջք իմ ի լսելոյ արդելեալ, ծունկք իմ տկարացեալ և համօրէն զգայութիւնք իմ ընդ հիւանդագին ցաւովք գրաւեալ՝ հարին ընդոտնեցին զիս գլխովին, և կամ արդ իբրև զկոճղ ինչ կիսայրեաց. լեզու իմ բարբառի, այլ միտք իմ ոչ օժանդակէ նմա. և այսր պատճառի աղագաւ՝ և ոչ իսկ կարացի մինչև ցայսօր թափանձել մտօք ըստ արժանւոյն յիմաստս իւրաքանչիւր գրութեանց Ձերոց՝ գրեցելոց ի 26 Յուլիսի և ի 7 Օգոստոսի ի Տփխեաց, և 17 դարձեալ Օգոստոսի ի Կատարինեբուրգ, զորս ունիմք ստացեալ յիւրեանց ժամանակս, զի արդարև թեպէտ եմ կենդանի, բայց իբրև մեռեալ և արդէն ի գերեզմանի եղեալ: Ձեմ այն այժմ, զոր տեսեր յանձատիլ իմ ի քէն ի ճանապարհորդութեան իմում յԱթոռս. զի ի ճանապարհի անդ մեծամեծ փոփոխութիւնք յաջառացան ինձ ըստ համարէն մասանց և զգայարանաց ցաւագնեալս անձին. մինչև ի ժամանել իմ յԱթոռս՝ հազիւ զգալ զիս և զանկումն իմ հեղմամբ բազմայորդ արտասուաց՝ առաջի սուրբ Տեղւոյն իջման Միածնի Բանին:

„Ահա վասն այսորիկ տեսեալ իմ զառաջելոյս անձն յայսգունակ վիճակ ցաւագին, եւ անշուշտ զգացեալ զմտալուտ չուումն իմ յասսի կենացս, փութացայ ի 18 ամսոյս մատուցանել ամենախոնարհաբար զինդիր աղերսանաց առ Ամենօգոստափառ Կայսրն ամենայն Ռուսաց եւ Թագաւոր Հայաստանեայցս Նիկոլայ Պաւլովիչն, զի ամենողորմածաբար բարեհաճեսցի փութով արձակել առ իս զարժանաւոր յաջորդդ իմ

ընտրեալ ի բիւրուց։ Եւ այսու գրով իմով յատկապէս զսուրբ անձն քո կացուցանեմ այսօր պարտաւոր առաջի Աստուծոյ, եւ Նորին սուրբ պատկերի Ամենողորմած Կայսեր, եւ համօրէն Մինարանութեանս եւ ազգիս, զի յընկալնուլ քո զրարձր հրաման Նորին Կայսերական Մեծութեանն՝ փոյթ յանձին կալցիս թարց իրիք զանցառութեան ժամ յառաջ ճեպել գալ և ժամանել ինձ յԱթոռս. զի քեւ միայն, որպէս հաւատամքն եւ յուսամք աներկբայապէս, հանդերձեալ է Աստուած ներգործել տակաւին զմեծամեծս իւր՝ յօգուտ եւ յերջանկութիւն ազգի եւ եկեղեցւոյ Հայաստանեայց՝ տառապելոց ի չորեքհարիւր ամաց հետէ ընդ ծանրատաղտուկ լծով այլազգական բռնաւորութեանց, եւ ի պայծառութիւն բարեզարդութեան Լուսաւորչեանս այս մեծ Գահի՝ խրթնայելոց մինչեւ ցայժմ ի նոցունց յանհաւատից բարբարոսութեանց։

,,Քրիստոսական է վէճն, որ կարողն է տանիլ, տարցի. ըստ որոյ իմ արդէն իսկ իրր եօթն ամաց յառաջ բարեաց նկատեալ եւ առաւել զշալ երկնաձիր զօրութեան ձերոյ եւ կարողութեան, համանգամայն եւ արժանաւորութեան՝ հաստատուն գրով հրաժարեցայ ի Հայրապետական իշխանութենէն, եւ յայտնելով զայն Կայսերութեան ամենայն Ռուսաց, Թագաւորութեան Պարսից, եւ ընդհանուր ազգի մերում Հայկազնոյ, զձեզ միայն ընտրեալ յատկացուցի Փոխանորդ իմ, եւ ընդհանրական ծայրագոյն կառավարիչ գերագահ Աթոռոյս, եւ հոգեւորական գործոց համարէն՝ վերաբերելով առ սա եւ առ ազգ մեր գլխովին. համանգամայն եւ ժառանգ, եւ յաջորդ Հայրապետական նախագահ Աթոռոյս։ Այլ բարեսրտութիւն ձեր խոնարհութեամբ հրաժեշտ տուեալ, տակաւին զնչխանութեանս ծանրութիւն յիմ վերայ եթող. եւ միայն անխոնջ աշխատասիրութեամբ ձերով յամենայն կարեւորսն յօգուտ Աթոռոյս եւ աթոռանցնոցս եւ ազգիս համակ, եւ ամենաջերմեռանդն անձնադիր հաւատարմութեամբ՝ գոյացք ինձ ի տարամ ծերութեանս հոգոր զօրաւիգն, ձեռնտու եւ օգնական, եւ յամենայնի քաջ սփոփարար, եւ գիւրին որոնս վէճակին. մինչեւ ի չուել իմ ի Ցփխեաց անտի յԱթոռս՝ անջատմամբ յամենաբաղձալի տեսոյ անձկալուդ իմոյ, տակաւին հարկեցայ ընդ իս բերել զանուն Կաթողիկոսութեանս. եւ ահա յայժմ վերջին տակարութեամբս վարակեալ, անուանակոչութեամբս այսու եւ եթ կամ պարտաւորեալ առ անտեսութիւնս յանձն եղեալ ինձ յԱստուծոյ։

,,Սմին իրի՝ որպէս առ Նորին Կայսերական Մեծութիւնն մատուցի խնդիր աղաչանաց իմոց, նոյնպէս եւ ի քէն յամենասիրելի եղբօրէդ իմմէ խնդրեմ արտասուօք հանդերձ՝ փութալ գալ ժամ յառաջ ի Հայրապետական Աթոռս՝ մինչեւ մեռեալ իցեմ. զի անձամբ իմով օծեալ զմիայն

արժանաւորդ այսմ Աթոռոյ՝ Հայրապետ եւ Կաթողիկոս ընդհանուր ազգիս, յանձն արարցից գլխովին զնախագահ Աթոռս զայս ի քեզ իշխանութեամբ հանդերձ. որով հանգիցէ եղկելի անձն իմ զառամեալ՝ ազատ գտեալ ի առչորմանէ ըղձից եւ խղճահարութեանց։ Եւ ըստ որում զգամ ես ի հոգի իմ, նախասահմանեալ մահն հանարակաց շրջապատեալ զինեւ՝ ոպասէ. այլ շունչ իմ յիս տակաւին յարատեւէ, որպէս երբեմն առ ծերունին Սիմէոն, ոչ տեսանել զայն մինչեւ տեսցից զՕծեալն Տեառն՝ զնոր չնորհալի Կաթողիկոսդ Ներսէս. եւ ասացից յայժմ, ,,Արդ արձակեա զծառայս քո Տէր ըստ բանի քում ի խաղաղութիւն. զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր ժողովրդեան քում Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ"։ Ողջ լեր, եւ կեցցէ անձն քո ի շրջանս ամաց յոլովից։ Կաթողիկոս ամենայն Հայոց ԵՓՐԵՄ"։

Ընտրելով այս ամբիչ խօսքով գրուած սիրալեր կոնդակին՝ Եփրեմ կաթողիկոսի փափագը անկատար մնաց. վասն զի տարիուկէսէն յետոյ, այսինքն 1830-ին ապրիլի 23-ին Ռուսաց կայսրը մասնաւոր հրովարտակաւ առաջնորդ նշանակեց զՆերսէս Լազարեանի և Ռեսարաբիոյ վիճակին, ուր այնուհետև 15 տարիի չափ կենալով՝ հետզհետէ պայծառացոյց։

Գրիգոր արքեպիսկոպոսի մահուանէն վերջը (1826) Ռեսարաբիոյ Հայոց եկեղեցիները երեսի վերայ մնալով՝ եկեղեցական կալուածները շատ տեղ աւերուել էին, և Քիշնևի առաջնորդարանը (որ հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոսին շինածն էր) ոչ միայն այն երկու տարուան մէջ իւր առաջին շքեղութենէն զրկուած ու կիսաւեր դար-

ձած էր, այլ և չգիտեմք որպիսի՞ դրամական հաշուոց մասին՝ քաղաքական իշխանութեան ձեռքն անցած էր. և ահա այն էր պատճառը՝ որ երբ Ներսէս արքեպիսկոսը Ռիշնեւ գնաց եւ Հայոց առաջնորդարանը եկեղեցական իշխանութենէն ելած գտաւ, հարկադրեցաւ ի սկզբան տեղւոյն երէցփոխան Տէր Յովակիմեան Մանուկ աղային տունը իջեւանել՝ իւր 8 մարդիկներովը հանդերձ, յորոց առաջին երկուքն էին Ստեփանոս վարդապետ Էրարատեան եւ Գէորգ վարդապետ Մկրտչեան:

Այնուհետեւ Ներսէսը մեծ ուշադրութեամբ սկսաւ քննել վեճակին եկեղեցական գործերը եւ ըստ կարելւոյն կարգի դրաւ, քաղաքական իշխանութեան ձեռքն անցած Հայոց առաջնորդարանը իրաւացի պատճառներով յետ առաւ՝ նորոգեց ու բարեկարգեց, քանի մի եկեղեցեաց մօտ հոգեւորական դպրոցներ բանալ հրամայեց եւ արդէն բացուածներուն վերայ փոյթ ու խնամք ունեցաւ. եւ որպէս զի Հայաստանեայց եկեղեցւոյ պայծառութեան

համար ուսեալ եկեղեցականներ պատրաստէ, Մանուկ Պէյ հայկազնոյն ձեռընտուութեամբը մասնաւոր կոնդակաւ Թիֆլիզէն Հնչեշտ հրաւիրեց Զմիւռնացի մեծահռչակ Մսեր վարժապետ Մսերեանը (յետոյ մագիստրոս աստուածաբանութեան Մոսկուայի Լազարեան Դեմարանի մէջ, † 3 Օգոստոսի 1873) և իւր վեճակի այլևայլ քաղաքներէն շնորհալի պատանիներ յուղարկեց այն տեղ, որք պէտք եղած ուսումը սովորէին յետոյ՝ քահանայութեան սրբազան պաշտօնն ընդունեցան ամենայն արժանաւորութեամբ, ինչպէս Օդեսսայի եկեղեցւոյ Աւագ քահանայ Տէր Յովհաննէս Թարթսիզեանը, բարեյիշատակ Տէր Յարութիւն Խաչենեանը, Հնչեշտի քահանայ Տէր Յակոբ Թօսունեանը, և այլն:

Մինչև այն ժամանակը որ եկեղեցական այլևայլ զգեստները, մեծագնի անօթներն ու զարդերը գրեթէ առանց հաշուոյ և մատենի կը մնար երէցփոխանաց ձեռքը, վերոյիշեալ երկու վարդապետները Ներսիսի կողմանէ վեճակին այլևայլ քաղաքներն երթալով

իւրեանց Առաջնորդի առաջադրութեանը համեմատ ժապաւինեալ մատեաններ սահմանեցին վիճակին ամենայն եկեղեցեաց համար, զորս և կոնսիստորիայի կնքո

նորդութեան աթոռը նստելով՝ իսկոյն մէկ եկեղեցական ուսումնարան բանալու աշխատեցաւ, որ վերջը Նոր-Նախիջեւանցի Խալիբեան Յարութիւն աղայէն († 24 ապրիլի 1871 թ.) մեծ գումար ընդունելով՝ Խալիբեան ուսումնարանը բացուեցաւ, ըստ ամենայնի համաձայն Ներսիսի Նպատակին, ուսկից թէ՛ եկեղեցական եւ թէ աշխարհական երիտասարդներ ելան, յորոց այժմ ոմանք քահանայութեան, ոմանք վաճառականութեան եւ շատերը վարժապետութեան կպարապին Ռուսաստանի, Տաճկաստանի և Պարսկաստանի այլեւայլ քաղաքաց մէջ. թէև ցաւելով սրտի պիտի ասեմք, որ այն ուսումնարանն ևս՝ չնայելով իւր մեծամեծ արտօնութիւններին, 1871-ին՝ քանի մի անհեռատես անձանց պատճառաւը խղճալի կերպով փակուեցաւ:

Այսպէս ահա, մինչդեռ Ներսէս արքեպիսկոպոսը իւր ժողովրդոց վիճակը հետզհետէ բարւոքելու կաշխատէր՝ Յովհաննէս Ը. կաթողիկոսը վախճանեցաւ (1842 թուականին մարտի 26), որով

եւ բոլոր ազգը Գանգեսի եղերքէն մինչեւ Նեւայի ափունքը „Քանի որ Ներսէսը կենդանի է, — կասէին միաբանութեամբ,—իրմէն աւելի արժանաւոր անձն չեմք ճանաչեր Լուսաւորչայ սուրբ Գահին Աթոռակալ“: Այս լուրը հետզհետէ տարածուելով՝ արդէն Ներսէսը կաթողիկոսի տեղ ընդունուած էր Հայոց կողմանէ. բայց որովհետև Ռուսաց տէրութեան Սահմանադրութեանը համաձայն՝ աշխարհիս այլևայլ կողմերն եղած Հայոց եկեղեցական և աշխարհական պատգամաւորաց քուէարկութեամբը կընտրուի կաթողիկոսը, Էջմիածնայ սրբազումար Սինհոդոսը իւր պարտականութեանը համեմատ Կոստանդնուպոլսոյ, Երուսաղեմի, Պարսկաստանի և ուրիշ տեղերու նշանաւոր եկեղեցականաց ձեռքովն իմացուց բոլոր Հայկազանց հին կաթողիկոսին մահն ու նորոյն ընտրութեան պատրաստութիւնը, որով և 1843-ին ամեն տեղէ պատգամաւորներ երթալով, ապրիլի 13—17 եղած քուէարկութիւններէն իմացուեցաւ որ ըստ մեծի մասին Ներսէս արքե-

պիսկոպոսը կուզեն Լուսաւորչի Աթոռակալ, ուստի և Ռուսաց կայսեր Բարձրագոյն հրովարտակովը նոյն տարւոյ Օգոստոսի 10-ին կաթողիկոս հաստատուեցաւ:

Ներսիսի ընտրութեան և կաթողիկոս հաստատուելուն լուրը քանի մի օրուան մէջ մինչև ամենահեռաւոր տեղեր տարածուելով՝ անպատմելի եղաւ Հայկազանց ուրախութիւնը, մանաւանդ Կովկասաբնակ Հայոց, որք ի վաղուց հետէ վայելած չինելով նորա հայրական քաղցր սէրը, իւր բացակայութեանը պատճառաւ զրկուած էին նորա տեսութենէն. ուստի և այն աստիճանի անհամբերութեամբ կըսպասէին իրեն, որ մէջերը Ներսիսի գալստեան վերայ խօսք եղած ժամանակը, Աստուծմէ մանաւոր կեանք կըխնդրէին, որ արժանացընէ զիրենք կրկին անգամ Ներսէսը տեսնելու և նորա հայրապետական տուրք օրհնութեանն արժանանալու:

Բայց այս նոցա փափագը շուտով չկատարուեցաւ. վասն զի Ներսէս՝ Լուսաւորչի Աթոռը արժանապէս ժառանգելէն յետոյ՝ Ռուսաց կայսրը Բիշ-

նևէն Պետերբուրգ հրաւիրեց զինքը, որպէս զի կաթողիկոսը դիւրութիւն ունենայ Հայոց ազգի ապագայ բարօրութեանը համար կայսեր հետ երես առ երես խօսելու և այս մասին պէտք եղած արտօնութիւնները խնդրելու իրմէ. ուստի և Ներսէս 1843 թուականի վերջին ամիսները Պետերբուրգ գնաց, ուր թէև ի սկզբան քանի մի ամիս հիւանդացաւ, բայց յետոյ աստուածային մանաւոր ողորմութեամբը պէտք եղած առողջութիւնը գտնելով՝ ժամանակին հարկաւոր ազգային խնդիրներուն վերայ մտադրութիւն դարձուց, Պետերբուրգի և Մոսկուայի եկեղեցեաց և նոցա պաշտօնէից բարեկարգութեանը վերայ հոգ տարաւ, իւր ազգօգուտ դիտաւորութիւնները Ներքին Գործոց Ոստիկանին յայտնելով՝ նորա ձեռնտուութիւնը խնդրեց և ամենայն հարկաւոր բանի վերայ պէտք եղած ուշադրութիւնը դարձընելէն յետոյ Պետերբուրգէն ելաւ:

Եւ որովհետև Բիշնևի Կոնսիստորիային մէջ այնպիսի գործեր կային, որ նոր կարգադրութեանց պէտք ունէին,

վեհափառ կաթողիկոսն Էջմիածին եր-
թալու ժամանակ, նախ՝ Քիշնև հան-
դիպեցաւ ու հարկաւոր տնօրէնութիւն-
ներն արաւ (1844, օգոստոսի 15), և
ապա վիճակին քաղաքներէն անցընելով՝
եկեղեցեաց բարեկարգութեանն ու դպրաց
ժամասացութեանը վերայ մասնաւոր
փոյթ ունեցաւ, ժողովրդական դպրոց-
ները աչքէ անցուց ու նոցա մէջ եղած
վարժապետները քաջալերեց. իւրեանց
կոչմանն արժանաւոր եկեղեցականները
առատօրէն վարձատրեց, անարժանները
անաչառապէս պատժեց. երէցփոխան-
ներէն ևս եկեղեցական փողերուն հա-
շիւները ճշդութեամբ ստանալու համար՝
երեք պատուաւոր Գոլոշակալ կամ ըստ
Խրիմեցւոց՝ Ընտրակալ դրաւ, որք էին.
Ռեսսարաբիոյ մէջ՝ Աւետեան Աստուա-
ծատուր աղան, Խրիմու մէջ՝ Տէօլվէթեան
Թորոս աղան և Նախիջևանի մէջ՝ Խա-
չիբեան Յարութիւն աղան, և սոցա վե-
րայ պարտք դրաւ՝ որ ամեն տարի բոլոր
երէցփոխաններէն հաշիւ պահանջեն,
տարեկան արդիւնքն ստանան՝ իւրեանց
մօտը պահեն, և Էջմիածնայ Սինհո-

դոսին յայտնելէն յետոյ՝ նորա կար-
գադրութեանը սպասեն:

Եւ այսպէս՝ Նախիջևանի և Ռես-
սարաբիոյ վիճակը, ուր գրեթէ 17 տարի
առաջնորդութիւն արած էր, վերջին
անգամն ևս—իբրև կաթողիկոս—հաս-
տատուն հիման վերայ բարեկարգելէն
յետոյ՝ ճանապարհը շարունակեց և
1845-ին դեկտեմբերի 8-ին Սուս-ուպոլ
քաղաքը հասաւ, ուր Աժտէրխանի ա-
ռաջնորդը օրերով յառաջ այն տեղ
սպասելով՝ իւր եկեղեցական խմբին ու
աշխարհական և քաղաքական անձանց
հետ մէկտեղ վայելուչ ընդունելութիւն
արաւ: Ներսէս այս տեղի ազգային գոր-
ծերուն ևս առանձին մտադրութիւն
դարձընելու և բարեկարգելու համար
մէկ ամբողջ շաբաթ կացաւ, ուսկից
ճանապարհը շարունակելով՝ դեկտեմբերի
16-ին Աստրա-ի հասաւ:

Թիֆլիզաբնակ Հայերը այնքան ժա-
մանակէ հետէ սպասած հայրապետին
գալուստը լսելով՝ իսկոյն բոլոր խանութ-
ներն ու գործարանները փակեցին, եւ
վեհափառ այցելուին ընդառաջ գնալ

փութացին, որ Թիֆլիզու Վէրա կոչուած տեղէն մինչև Դիդոմեան դաշտը և անկէց ևս մինչև Մըցխէթայի մերձակայքը քանի մի վայրկենի մէջ արանց և կանանց բազմութեամբ լցուեցան. իսկ այն փողոցները՝ ուսկից պիտի անցնէր կաթողիկոսը, նոցա վերայ շինուած փառաւոր տներուն պատուհանները, պատշգամներն ու կտուրները գոյնզգոյն հագուստներով զարդարուած Հայ և Վրացի տիկիններն ու օրիորդները բռնած էին, որոց ամենուն երեսին վերայ իւրեանց հոգւոյ ներքին ուրախութիւնը կփայլէր պայծառապէս:

Միւսը օրը, այսինքն դեկտեմբերի 18-ին առաւօտը՝ Վրաստանի և Իմերեթի առաջնորդ բարեյիշատակ Պարապետ արքեպիսկոպոսը՝ երկու եպիսկոպոսաց, երկու վարդապետաց և քանի մի աւագ քահանայից հետ մինչև Դուշէթ գնաց դիմաւորելու վեհափառ Հայրապետին, ուր իւր թեմի բարելաւ դրութեան գրաւոր յայտարարութիւնը մատուցանելէն յետոյ, ուղեկից եղաւ կաթողիկոսին մինչև յիշեալ Վէրա կոչուած տեղը:

Այս տեղ բերած ու պատրաստած էին Հայրապետական գաւազանը, դրօշն ու կառքը. և այս տեղ եկած կապասէին Ընդրկովկասեան սահմանի քաղաքական գլխաւոր կառավարիչ գեներալ-լէյտենանտ Լաբինսկին, հրամանատար զօրաց Հիւսիսային Դաղեստանի գեներալ-լէյտենանտ իշխան Բարսեղ Բէհբութեանը Կովկասեան փոխարքայի դիւանատան վերատեսուչը և ուրիշ շատ նշանաւոր անձինք, որք վեհափառ այցելուին աջը համբուրելով՝ նորա Հայրապետական օրհնութիւնն առին: Յետոյ կաթողիկոսական կառքը նստելով՝ Ներսէս ոկսաւ յառաջ երթալ երկու վարդապետաց հետ, որոց մէկը Հայրապետական գաւազանը կը կրէր և միւսը՝ դրօշը. կառքին դիմացէն ևս զարդարուն ձիերով երկու պատուաւոր հայկազունք կերթային, և եաւէն երկու շաթիրները (կաթողիկոսական սպասաւորները) կարմիր հագուստներով, կառքին աջ ու ձախ կողմը կանգնած:

Դեռ քաղաք չմտած՝ ընդառաջ ելին Ներսիսի՝ օգոստափառ կայսեր Փլիգել-

ադիւտանտ կոմս Ռէնկէնդորֆն ու փոխարքայի որդին, և կնիազ Վորոնցովի կողմանէ շնորհաւորցուցին վեհափառ հայրապետին բարեյաջող ճանապարհորդութիւնը: Երբ քաղաքին ծայրը հասաւ, Թիֆլիզու գաւառապետ գեներալ-մայիոր Դեբեբոլն եւ դիմացը և իւր ուրախութիւնը յայտնեց վեհափառին ողջամբ ժամանելուն վերայ. յետոյ քիչ մի յառաջ մղելով կառքը՝ Վանքի մայր եկեղեցւոյն ահագին զանգակի առաջին դրնդիւնը լսուեցաւ, որուն ձայնակից եղան իսկոյն Հայոց 24 եկեղեցեաց միւս զանգակները՝ Ներսիսի քաղաք մտնելուն պատճառաւ եկեղեցեաց ուրախութիւնը հրատարակելով:

Աղեքսանդրեան հրապարակի վերայ կսպասէին Թիֆլիզու բոլոր եկեղեցականները, ուր քանի մի վայրկենի մէջ անթիւ բազմութիւն արանց եւ կանանց լցուած էր: Ներսէս տեղ հասնելուն պէս՝ եւաւ կառքէն և իւր հայրապետական օրհնութիւնը բաշխելով ժողովրդոց՝ իրեն համար պատրաստուած ամպհովանւոյն տակը կանգնեցաւ: Յետոյ ձայնաւոր կղերաց „Ուրա՜խ լեր սուրբ եկեղեցի“ շարականին ներդաշնակ երգեցողութեամբը Վանքի մայր եկեղեցին գնաց, ուր նախ Կարապետ արքեպիսկոպոսը մէկ համառօտ ատենախօսութիւն ընելով ժողովրդեան կողմանէ՝ փառք տուաւ Թագաւորին թագաւորաց ու վեհափառ կաթողիկոսին գալուստը շնորհաւորեց. և ապա Ներսէսն ինքը, քաջալերեց ժողովուրդը իւրեանց ապագայ բարօրութեան համար և յետոյ եկեղեցականաց հանդիսաւոր ուղեկցութեամբը Էհարան մտաւ:

Միւս օրն սկսաւ ընդունել Ներսէս՝ մեր և օտարազգի այցելուները, եւ Թիֆլիզու քաղաքացւոց կողմանէ մէկ դեղեցիկ ճառ կարդաց Պարոն Տէր-Շմաւոնեանը: Նոյն օրն եկան այցելութեան նաև Կովկասու փոխարքայ Մ. Ս. Վորոնցովն ու իւր կինը:

Այնուհետև կաթողիկոսը ամբողջ չորս ամիս կեցաւ Թիֆլիզ, ուր ամեն բանէն աւելի մտադրութիւն դարձուց Ներսիսեան իւրակերտ դպրոցին բարեկարգութեանն ու յառաջադիմու-

թեանը, և 1846 թուականին մայիսի 5-ին ճանապարհ ելնելով՝ նոյն ամսոյ 8-ին Երևան և անկէց ևս Ս. Էջմիածնի մայր Աթոռը հասաւ:

Մէկ ամսէն վերջը, այսինքն յունիսի 9-ին նշանակելով օծութեան օրը՝ ամեն տեղերէ 800-էն աւելի եկեղեցական և աշխարհական անձինք գնացին հանդիսին ներկայ գտնուելու, յորոց 179 հոգիքը միայն եկեղեցականք էին, այսինքն 14 արքեպիսկոպոսունք և եպիսկոպոսունք, 50 վարդապետք, 65 աւագ քահանայք և 50 աւագ սարկաւագունք և ուրարակիրք: Օծութեան հանդէսը վերջանալէն յետոյ՝ երկու շնորհաւորութեան ճառեր կարդացուեցաւ եկեղեցւոյն մէջ, որոց մէկը Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսը կարդաց հայերէն լեզուաւ, և միւսը Շահնազարեան Կարապետ վարդապետը ռուսերէն լեզուաւ. իսկ այլևայլ տեղերէ քսանէն աւելի նոյնպիսի ճառեր ընդունեցաւ Ներսէս, որպէսնաև զանազան երգեր, որոց մէկուն քանի մի տունը մեր ընթերցողաց իբրև ճաշակ կը դնեմք այս տեղ.

Թ՝ընդաց երկինք ահեղ ի ձայն ճայթեաց կամարն ամպրոպեան,
Ցոլացան լոյսք դոյն աղեղան ֆիրք շող ի շող շողշողան.
Եկն ի հանդէս Այր Սբրբազան՝ նըստաւ յԱթոռ լուսակերտ,
Հանդիսակիցք փառաշարդեալ անդ շար ի շար բազմեցան:
Հարցէք ո՞վ է, հարցէք ո՞ է վեհանձն հոգին դիւցազեան,
Որ Հայոց Տէր, Հայոց Իշխան, Հայոց Ներսէս Սբրբազան:

Փողք հընչեցին գաբրիէլեան զուարթունք ի դուրս թափեցան,
Ընդ օդ վըճիտ սաւառնացեալ թեւս բարախեն գան ի գան.
Դեռ ոչ գիտեն՝ առ ի՞նչ բազմի վեհ փառաւոր ծերունին
Եւ թէ առ ի՞նչ հրճուին խընդան յայն լուսապանծ տեսարան:
Հարցէք ո՞վ է, Ա՛յն:

Փառայն Աստուած ահեղատես վերուստ ի վայր որոտաց.
„Դա է, ասէ, իմ սիրելին, սիրա իմ դրմա հաւատաց.
„Առէք ըզթագ զայս խաչանիշ, առէք զայս քոշ լուսափայլ
„Դիք ի գլուխն, ասացէք թէ՝ Աստուած ըզքեզ պըսակեաց“:
Հարցէք ո՞վ է, Ա՛յն:

Խընդաց երկինք, խընդաց երկիր յայս ձայն փառաց աստուածեան
Սբրինգք ձայնեն դերաստիճան՝ տաւիղք երգեն տանդաղեան,
Ինքն յԱթոռ լուսանըկար թագըն փայլեր ի գլուխ,
Դեմն ի խոնարհ կալեալ ասէր, թէ „Այս փառաց չեմ արժան“:
Հարցէք ո՞վ է, հարցէք ո՞ է վեհանձն հոգին դիւցազեան,
Որ Հայոց Տէր, Հայոց Իշխան, Հայոց Ներսէս Սբրբազան. Ա՛յն:

Սոյնպիսի մէկ երգ ևս Ներսիսի Երևան մտած միջոցին երգեցին, որոյ առաջին տունը այս է.

Երգեցէք ազգ Հայոց զգալոյտ մերոյս հրկայսն,
Որ երբեմն պաշտպաներ զպարիսպ սուրբ Էջմիածնի.
Աթոռն աստուածիջեան ձեռամբ սորին փրկեցաւ,
Անաերուն Հայկազանց տեր և փրկիչ յայտնեցաւ. Ա՛յն:

Օծութեան հանդիսէն մէկ ժամ անցնելէն յետոյ 1950 հոգւոյ կերակուր

տրուեցաւ, յորոց 250-ը Վ. Էհարանի սե-
ղանատան մէջ նստան, 1250-ը հասա-
րակաց սեղանին վերայ, և 450-ը (որ
ստորաստիճան ռուս զինուորականք
էին) Ղ. աղարապատի ընդարձակ բակին
մէջ պատրաստած տեղոյն վերայ: Ե-
րեկոյին վանքի բոլոր տեղերը ճրագա-
լուցով զարդարուեցաւ և բազմութիւնը
մինչև կէս գիշեր ուրախութիւն արաւ
զինուորական երաժշտաց և ազգային
փողհարաց ու թմբկաց հնչմամբը:

Հանդիսէն մէկ օր վերջը արձակեց
Ներսէս այլևայլ տեղերէ եկած բոլոր
եկեղեցականները, ոմանց բերանացի
շնորհակալութիւն անելով, ոմանց օրհ-
նութեան կոնդակ տալով և ոմանց
խաչով կամ կամիլաֆկայով և կամ
փիլոնով վարձատրելով, իբրև նշան
նոցա այն մեծ հանդիսին արժանա-
նալու բաղդն ունենալուն. իսկ ինքը ա-
ռանց ժամանակ կորուսանելու նոյն
օրերէն սկսաւ Ս. Էջմիածնի Սինհո-
դոսի բարեկարգութեանը հոգ տանել,
և նորա սրբազան անդամոց և աշխար-
հական պաշտօնատեարց գործողութիւն-

ներուն վերայ պէտք եղած մտադրու-
թիւնը դարձընել:

Նոյն տարւոյ հոկտեմբերի 27-ին
Գիւտ խաչի կիւրակէ օրը կատարեց Ներ-
սէս մեռոն օրհնելոյ մեծ հանդէսը, որով
աշխարհիս ամեն կողմէն դարձեալ ե-
կեղեցական և աշխարհական անձինք
գնացին Էջմիածին. և յետոյ դեկտեմ-
բերի 17-ին նորէն Թիֆլիզ վերադար-
ձաւ, ուր առաջուան պէս մեծ բազմու-
թեամբ ընդառաջ գնացին ազգայինք
եւ օտարք և ամենայն սիրով ընդու-
նելով զինքը՝ նորա հայրապետական
օրհնութիւնն առին:

Այնուհետև Ներսէս՝ չնայելով նորա
ծերութեան հասակին, իւր հայրապե-
տական գործերը կատարելէն զատ՝ մեծ
եռանդով կաշխատեր նաև ազգիս բա-
րոյական դաստիարակութեան և ու-
սումնական յառաջադիմութեան մասին.
և այս պատճառաւ հրաման հանեց որ
Թիֆլիզու Հայոց ամեն եկեղեցեաց սրահ-
ներուն մէջ ժողովրդական դպրոցներ
բացուին: Հայց որովհետև Տերութեան
օրէնքն այնպէս էր, որ Վ. բաստանի ա-

մենայն դպրոցները Կովկասու Ուսումնական Շրջանակի իշխանութենէն կկախուէր, որով և շատ դժուարութեամբ կբացուէին այն դպրոցները, Ներսէս պէտք եղած տնօրէնութիւններն ու դրագրութիւններն արաւ, և 1853-ին հրաման եկաւ Ցերութենէն, որ Հայոց եկեղեցեաց և վանօրէից մօտ բացուած դպրոցները Կովկասու Ուսումնական Շրջանակի իշխանութենէն դուրս լինին, և Հայ եկեղեցականաց կառավարութեանը մնան:

Յետոյ Թիֆլիզու և Էջմիածնի տպարաններէն ելած գրոց տպագրութիւններուն վերայ ուշադրութիւն դարձնելով՝ պակասաւոր գտաւ. ուստի և 1854-ին չորս տպագրական մամուլ բերել տուաւ Եւրոպայէն՝ Մոսկուայի վաճառական Ենանեան Յովհաննէս աղային ծախիւրը, որոց երկուսը Թիֆլիզու տպարանին թողուլ հրամայեց և երկուսը Էջմիածին տանել:

Էջմիածնի մէջ ևս 1847-ին մէկ ընդարձակ անտառ շինել տուաւ Ներսէս, յորում 47,230 հատ այլևայլ

տեսակ պտղատու և անպտուղ ծառեր տնկեց Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսին վերակացութեամբը, որպէս զի թէ ամառուան սաստիկ տաքերու ժամանակ զբօսանաց տեղ լինի վանքի միաբաններուն, և թէ միանգամայն ժամանակով Էջմիածնի համար պէտք եղած վառելու փայտը կտրուի անկեց: Այնպէս մէկ գեղեցիկ լիճ շինել տուաւ վանքի պարսպին մօտ, որոյ աւելցած ջուրը պէտք եղած ժամանակ առանձին ջրանցքներով անտառը կթափուի և հարկաւոր տեղերը կը ջրէ: — Այս լճին մէջ ամառ-ամեռ ձուկներ կպահէ վանքին տնտեսը:

Եւ այսպէս, Ներսէս իւր սարկաւագութեան օրէն մինչև իւր կաթողիկոսական կենաց վերջին օրը ազգիս կենցաղօգուտ պիտոյիցն ու նորա բարոյական և ուսումնական յառաջադիմութեանը աշխատեցաւ, մինչեւ վերջապէս 1857 թ. փետրուարի 13-ին, իւր 86 տարեկան հասակին՝ անակնկալ մահը յափշտակեց զինքը Հայաստանեայցս Մայր Աթոռէն, և մարմնոյն երկրաւոր

կապանքն արձակելով, նորա աստուածարեալ հոգին երկնային կապանքով միացուց իւր Երարչին հետ:

Միւս օրն առաւօտը Ներսիսի մահուանլուրը Թիֆլիզու Հայկական եկեղեցեաց ողբաձայն զանգակնահարութեամբը տարածուելով՝ բոլոր Հայերը սգոյ մէջ ընկղմեցան:

18-ին կէսօրուան չորս ժամուն մարմինը մեծ հանդիսիւ վեհարանէն վանքի մայր եկեղեցին տարին ի Ներկայութեան փոխարքային Պոլկաստու, ռուս արքեպիսկոպոսին Պրաստանի, զինուորական և քաղաքական մեծամեծ պաշտօնատեարց Թիֆլիզու և անթիւ բազմութեան այլևայլ ազգի և աստիճանի անձանց:

Պէհափառ հանգուցելոյն մարմինը՝ Էջմիածնի Սիւնհոդոսի սրբազան անդամոց յապաղելուն պատճառաւ ամբողջ երեք օր պահուեցաւ յիշեալ եկեղեցւոյն մէջ, ուր բազմութիւն արանց և կանանց առաւօտուընէ մինչև երեկոյ ուխտաւորաց պէս այն եկեղեցին յաճախելով՝ Ներսիսի Էջը կհամբուրէին:

Այն երեք օրը հեռուէն դիտողին այնպէս կերևէր թէ նոյն միջոցները Թիֆլիզու մէջ ազգութեան և հաւատոյ կողմանէ ամենևին տարբերութիւն չկայ. վասն զի ոչ միայն զանազան քրիստոնեայք, այլ և Հրեայք եւ Մահմետականք կերթային իւրեանց վերջին համբոյրը տալու:

Վերջապէս փետրվարի 24-ին պատարագէն վերջը յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ: Ամենէն առաջ տաներկու Հայ ձիաւորք կերթային եւ սոցա ետեւէն դագաղակիր կառքը ոսկեզարդ սեւ ամպհովանիով ծածկուած եւ վառ ճրագներով շրջապատուած: Յետոյ կերթային Ներսիսեան դպրոցի աշակերտքը՝ երկու կարգ շարուած եւ ձեռքերը վառ մոմեր բռնած. քիչ մի անդին սեւազգեստ եկեղեցականքը, որ դագաղը կոտանէին. իսկ դագաղին ետեւէն փոխարքայն և ամեն աստիճանի զինուորական և քաղաքական անձինք կերթային, և ապա բազմութիւն անթիւ ժողովրդոց զանազան ազգաց:

Բաղաքէն դուրս Էջմիածնոյ ղապա-ատուած տեղը կրկին հոգեհանգիստ կատարուեցաւ, և վեհափառ հանգուցեալին դագաղը փակ կառքի մէջ դրուելով՝ Սինհոդոսի անդամոց և ռուս հեծելազօրաց պահպանութեամբը Էջմիածին յուղարկուեցաւ: Նոյն օրը Հայկազն Վարդան Ատուածատրեան Արշակունի իշխանը մեծածախ հոգեհաց պատրաստելով՝ բոլոր յուղարկաւորները, որպէս նաև Թիֆլիզու հայ արհեստաւորները՝ կերակուրի հրաւիրեց, եւ արգելանոցի մէջ բռնուած անձանց դրամական օգնութիւն արաւ:

Երկու օրուան մէջ Էջմիածին տարին հանգուցեալին մարմինը, և ըստ կանոնի Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ՝ մարմնոյն օծումը շքեղաշուք հանդիսիւ կատարելէն յետոյ, վանքի գաւթին աջակողմը՝ Դանիէլ կաթողիկոսի շիրմին մօտը թաղեցին ՆԵՐՍԷՍ ՀԱՅՐՆԱՊԵՏ տապանագրով:

Այնուհետև Էջմիածնի Սինհոդոսին կարգադրութեամբը Հայաստանեայց եկեղեցիները ամենայն տեղ հանգստեան

պաշտօն կատարեցին, և մինչև նոր կաթողիկոսի ընտրութիւնը՝ Ներսիսի անունը յիշեցին պատարագի մէջ:

Եւ այսպէս, Ներսիսի մահուան գոյժը աշխարհիս չորս կողմը տարածուելով՝ ազգային և օտար լրագրապետներէն ոմանք իւրեանց թերթերուն նիւթ արին այս մեծահռչակ Հայկազնոյն համառօտ մահացուցակը, և ոմանք ևս դամբանական ճառեր հրատարկեցին, որոց մէջ Փարիզ տպուած 1857 թուականի „Պատեաց Աղաւնի“ օրագրոյն՝ բարեյիշատակ Գաբրիէլ սրբազան Այվազեանի բանաստեղծական գրուածքը ամենէն իմաստալի տեսնելով՝ պատշաճ կհամարիմք այս տեղ ամբողջապէս հրատարակել:

„ՀԱՆԳԻՍՏ ՅԱՒԻՏԵՆԻՑ

ՏԵՐՈՆ ՆԵՐՍԻՍԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ.

„Զայն գուժեաց ՅԱՅրարատայ, և հընչեցին բեւեռք կրկին,
Նընջեաց Հովիւն մեր արթուն, և սուգ պատեաց զամենեսին.
Ահագինքս մըռընչեաց ոպիտակափառն մեր Պասիս,
Սեպուհ, կովկաս և Արագած ընդ Ցորոսի հառաչեցին:
Մե՛ռ, այս բանիցս այրիացար, Եկեղեցի՛ Հայաստանեայց.
Այս քանի՛ արտասր հեղուս ի քոյդ չըքնաղ ականոշեաց.
Ջո՛ւր վիժես դու քաղցրահամ յոգինատիպըդ դարատից.
Եթէ դառն ոչխս արտասուաց մինչև ի ծով լայնատարած:

Մերթ չուրջ հայոց կոյտ աչսգեղ ի բաց ըզքօղըն պարուրեալ...
Ա՛հ, մինչև ցերբ յաջմէ բոսոր՝ ընդ ահեկէ ծուխ մըրրկեալ
Ցեռանիցես և սարսիցես և թաւալեալ անկանիցես
Մինչև անդրէն սիւդ արփենոյն ի դէմըդ սուրբ առնու ծաւալ...

Լուսածընունդ քո զաւակունք ընդ տիեզերս վայրավատին
Քեզ ողբակիցք են ի սրտէ, ընդ քեզ ի ջայլս գումարին.
Հօտապետքըն զաթոռով քոյ սեւաթոյր տարածանեն,
Եւ խաչանց հոյլք խուռներամ դըռոյթ ըզքեւ տալ խուճապին։

Են են, ո՜հ, և խորթացեալք ի սուրբ գըրկացըդ մայրենի,
Որոց վայրք և ժամանակք եռուն գոգցես սիրտ վայրենի,
Եւ խընտան ընդ վիշտս քո և ընդ պարծանըդ տագնապին.
Ա՞յսպէս ուստան ի Լատին, Ա՞յսպէս յորդւոց Ալբիոնի..

Բայց քեզ յո՜ւշ, Մայր անարատ, պայծառ աւուրքն այն առաջինք
Ցորս հոգւոց մեր Լուսատուին ցուցաւ տեսիլ, բանք ահագինք,
Երբ օդիք ոչ նոյնգունակ անցին ընդ հուրըն և ընդ ջուր
Մինչև ելին ի սուրբ հանգիստ, մինչև բացան նոցա երկինք.

Ընդ ջեաց Ներսէս արժանընտիր աթոռակալ սուրբ Ներսիսեանց,
Ողջակիզեալ առ Տէր ու առ Հայս սիրոյ բոցովն գերազանց.
Վերին ասատն անակնառու, և կըրտսերաց հայր խընամտ,
Եւ սըրտին կորով ըզհուր, վառեր յայիս գլուխ հերապանձ։

Դու ո՞վ Հայր, կառքդ Իսրայէլեան, յափըշտակեալ յանկարծ ի մէնջ,
Ցո՞ դիմես ի մեայլ երկրէ չաղեալ իւրոյ փոշիոտնէջ,
Ո՞ւր քոյինդ Եղիսէոս, ո՞ւր Մովսիսին յաջորդ Յեսու,
Ո՞ւմ տացէ և Աղաւնիս զբերանոյն շիշ քոյինատենչ...

Այո՞, շիշ ի բերանին դարձ ի տապանդ Էջմիածնի
Աղաւնեակս առնէր Նոյեան փութալ ի գիրկսըդ հայրենի.
Սատանեալ և սըրտաբեկ արդ առ ոտամբ Սէնեայ մընչէ,
Գուժկան՝ ոչ աւետաբեր կացեալ. աւաղ, Հայաստանի։

Առ այժմիկ հուպ դու Էլին կաս աթոռոյ վեհ Դիտապետ.
Քաղցր ակնարկեա ի Գահ քոյին, տուր պայազատ զոք քեզ հանգէտ.
Շող լուսոյն բորբ ծագեսցէ ի պաչտելին Իջման տեղի,
Եւ Ներսիսեան թէ ոչ անուամբ՝ հոգւով տացի մեզ Հայրապետ։

Յայնժամ սուգ ի ցընծութիւն դարձցի ազգիս թորգոմական,
Հոտք և հովիւք ըղթինդ տացեն խուռն ի գաւիթըս սըրբութեան
Երդնուլ զուխտ սըրբանուէր քում յաջորդին արժանաւոր,
Կալ անսասան ի քոյդ հաւատ, ի յոյս ու ի սէր եղբայրական՝՝։

Մեր ազգի աշուղներն ևս չուշացան Ներսիսի մահը գուժելու իւրեանց զանազան երգերովը, որոց մէջ աւելի ուշադրութեան արժանին է Ալբերի Հիրինի երգածը.

„Օ՜արթիր ի քնոյ, մայր Հայաստան, տես ո՞ւր է քո Ներսէսը.
Ժամանակը պառաւել ա, էլ չի՛ ծընիլ էնպէսը.
Շատ թանկագին գանձ է ազգի հաւատարիմ Տընտեսը.
Նա էր քո որբ որդւոց համար Աստուածառաք Մովսէսը։

... Դու Փետրվար նահանջ ամիս՝ թուք լինի քո երեսին.
Միանգամայն բարօրութեան նշան չունի քո ծէսին.
Յիսունըհինգ թուին առիր դու մեծ Նիկողայոսին,
Յիսուն-եօթին խլեցիր նորա ընտրած Ներսեսին։

Պատմութեանց մէջ անհաշիւ է՝ Փետրվար՝ քո գործերդ.
Վերջապէս մեր Հայոց անտեր ազգին կըպաս քո խէրդ.
Ձեռս ընկնէիր՝ անխնայաբար կապոտէի ոտներդ,
Մուր քըսելով աղտեղէի քո անամօթ պատկերդ՝՝ և այլն։

Ներսէսը բնութեամբ բարեսիրտ, աշխատասէր, ծանր և խօսքի տէր մարդ էր. իւր գլխաւոր գործերը անձամբ կանէր, և ամեն բանի մէջ զարմանալի անվեհերութիւն կցուցընէր։

Հասակը միջակ էր, մարմինը նիհար, աչքերը սև ու վառվռուն, դէմքը սուրբ ու պատկառելի, և իւր ծանր ու մեղմ խօսակցութիւնը բնական ճարտասանութամբ զարդարուած։

Հասարակաց բարոյն և մասնաւորապէս Հայոց ազգիս բարօրութեան վերայ ունեցած սէրն ու աշխատանքը գերազոյն աստիճանի հասած էին:

Որքան որ իւրեանց պարտքն ու աստիճանը ճանաչող եկեղեցականները վարձատրելու և քաջալերելու համար առատ էր և յօժարափոյթ, նոյնքան եւս իւրեանց կոչմանն անարժան հոգևորականները պատժելու և յանդիմանելու համար պատրաստի:

Ամեն մարդու խօսքի շուտով չէր հաւատար, բայց եթէ քանի մի անգամ փորձելով ճշմարիտ ճանաչէր զինքը, մեծ մտերմութեամբ կվարուէր հետը:

Երբ որ և իցէ առաջնորդէ կամ կոնսիստորիայէ այնպիսի լուր առնուր՝ որոյ հետևանքը ազգութեան ամօթ և նախատինք կրնար բերել, գիշերներով քունը չէր տաներ և խոր մտածութեանց մէջ կընկղմէր. այն միջոցները սատիկ նեղսիրա կլինէր, բայց երբ իւր մտերիմներէն մէկը քաղցրութեամբ հասկացներ իրեն որ իւր կենացը վնաս է այնքան մտածելը, իսկոյն իրեն արածը

պակասութիւն ճանաչելով՝ „Ես Հայ ազգի կենաց վիճակը կարգաւորեցի, կասէր ժպտելով, բայց իմ կենաց վիճակը դեռ չկարողացայ կարգաւորել“:

Սովորութիւն ունէր իւր սեպհական գրքերուն և ուրիշ բաներուն վերայ իւր ձեռքովը մակագրութիւն անել. և ինչպէս կերևի Նորերս գտնուած Նորա մէկ պղնձէ կաղամարին (թանաքամանին) վերայ գրուած ոտանաւորէն՝ Ներսէս իւր մանկութեան ժամանակէն ունէր այդ սովորութիւնը: Կաղամարն այժմ իւր եղբօրորդի Շահազիզեանց — Կամսարական Յարութիւն աղայի մօտն է, և վերան այս ոտանաւորս գրուած է.

ՆԵՐՍԷՍ ԴԷՊԻՐՍ ԱՇՏԱՐԱԿՑԻ,
ՀՈԳԵՒՈՐԴԻՍ ԳԱԼՈՒՍՏ ՊԵՏԻ.
ԱՌԻ ԱՐԴԵԱՄԲ ՄԱՐՄՆՈՑՍ ԾՆՈՂԻ
ԶԱՑՍ ԿԱՂԱՄԱՐԻՍ ՊԻՏ.ՆԻ,
Ի ԹՈՒԻՆ ՀԱՑՈՑ ԵՐԵՍՆԵՕԹԻՆ
ԵՐԿՀԱԲԻՒԲԵԱԿՆ ԸՆԴ ՀԱԶԱՐԻՆ (ՌՄԼԷ = 1788):

Ինչպէս որ վերը յիշեցինք՝ Ներսէս իւր այսքան ազգաշահ գործառնութեանց համար՝ Էջմիածնի Սինհոդոսին կարգադրութեամբը՝ ԱՌՅՈՒՆԱՍԷՐ անուանեցաւ, առաջինը այն պատճառաւ որ տակաւին իւր առաջնորդու-

թեան օրէն Վրաստանի եւ Նորա շրջակայ տեղերը եկեղեցական դպրոցներ բանալով՝ վաթսուն հազար Հայ ժողովրդոց հայերէն խօսելուն պատճառ եղաւ, որ իրմէ յառաջ սովորաբար վրացերէն կխօսէին, եւ երկրորդը՝ որ քաղցր է անտարակոյս ամենայն Հայի, իւր անունման Աբրամ հայրենասիրի՝ դարերու հնութենէն գրեթէ մոռացուած անունը, թէ Նորա յաւիտենական փառացն արժանի Ներսիսի նման անձին երեւելովը վերածնել ու կենդանացընել, եւ թէ միանգամայն այս հայրապետական փառքով ու պատուով պսակուած վեղարին տակը փայլող հոգեւոր Աբրամայ յիշատակը՝ Հայաստանի երախտագէտ որդւոց սրտին մէջ ոսկեղէն տառերով դրոշմել:

ՅՈՎՀ. ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ.

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 7-го Января 1881 года.

ՀՀ Ազգային գրադարան
NL0341633